

դուրս հանեց գետնախնձորը ու հաւկիթը եւ զատ-զատ ամաններու մէջ դրաւ զանոնք: Ապա շերտփով զաւաթի մը մէջ լեցուց սուրճը եւ աղջկան դառնալով հարցուց. «*Ի՞նչ կը տեսնես հիմա*»:

- Գետնախնձոր, հաւկիթ եւ սուրճ,- պատասխանեց ան շուտով:
- Աւելի մօտէն նայէ՛ եւ դպիր գետնախնձորին,- ըսաւ հայրը:
Երբ դպաւ, տեսաւ, որ կակուղ էր: Ապա մարդը խնդրեց որ աղջիկը հաւկի-

թը առնէ եւ կտորէ: Երբ կեղեւը հանեց տեսաւ որ միջուկը կարծր էր վերջապէս հայրը ըսաւ. «*Իմէ՛ սուրճեն, աղջիկս*»:

Անոր հոտը ժպիտ մը ուրուագծեց աղջկան դէմքին վրայ:

- Հայրի՛կ, ի՞նչ կը նշանակէ այս,- հարցուց աղջիկը:

Իմաստուն մարդը բացատարեց, թէ գետնախնձորը, հաւկիթը եւ սուրճը նոյն փորձանքին մէջ ինկած էին՝ եռացած ջուրը. սակայն իւրաքանչիւրը տարբեր վերաբերմունք ունեցած էր: Գետնախնձորը զօրաւոր եւ կարծր էր, բայց եռացած ջուրին մէջ կակուղացաւ եւ տկարացաւ: Հաւկիթը, որ դիւրաբեկ էր, երբ տաք ջուրին մէջ ինկաւ՝ կարծրացաւ:

Մինչդեռ սուրճը յատուկ էր: Ան եռացած ջուրին հետ խառնուելով գոյնը եւ համը անոր փոխանցեց, դարձաւ ցանկալի ըմպելի մը:

- Ատոնցմէ ո՞ր մէկն ես դու,- հարցուց իմաստուն հայրը: Երբ դժուարութիւններ կը բախեն դուռը, ինչպէ՛ս կը պատասխանես, գետնախնձորի՛, հաւկիթի՛, թէ ոչ սուրճի պէս: Կեանքի մէջ շատ բաներ կը պատահին մեր շուրջը, սակայն ամենակարեւորը այն է, որ ի՞նչ կը պատահի մեր ներսիդին անոնց պատճառով: Երբ դժուարին պարագաներու մէջէն կ'անցնիք արդեօք գետնախնձորի պէս մեր զօրութիւնը կորսնցնելով կը տկարանանք կամ հաւկիթի պէս կը կարծրանա՞նք, թէ ոչ՞ սուրճին պէս անուշ բոյր ու համ կը փոխանցենք մեր շուրջիններուն եւ բարի օրինակ կը դառնանք բոլորին:

ԹԻՒՔ ՄԱՏՐԱՍՏԵՃ՝ ՌԻՅԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻԳՐԻԲԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՖԻ ԲԵՇԻՇԵԱՆ



ՇՆՈՐՀԱԽՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ,
ԳԱԼՈՒՄՏԴ ԸԼԼԱՅ
ԲԱՐԻ

Ո՞վ չ'ուզեր որ Նոր Տարին բարեբեր, ուրախալի եւ խաղաղ ըլլայ: Բայց միշտ ալ անակնկալ հիւանդութիւններ, արկածներ, փորձանքներ կամ ճախողութիւններ կրնան պատահիլ:

Խոհարարի մը մանկամարդ դուստրը զանգատեցաւ հօր, որ իր կեանքը անտանելի էր եւ չէր գիտեր ինչպէս պիտի լուծեր իր թնճուկ հարցերը: Յոգնած էր պայքարելէ եւ շարունակ մաքառելէ: Կարծես հազիւ հարց մը կը լուծուէր, ուրիշ մը կը յաջորդէր: Իմաստուն հայրը աղջիկը խոհանոց առաջնորդեց, ուր երեք կաթսաներ ջուրով լեցուց եւ բարձր կրակի վրայ դրաւ: Երբ ջուրը սկսաւ եռալ, մարդը մէկուն մէջ գետնախնձոր մը դրաւ, երկրորդին մէջ հաւկիթ մը, իսկ երրորդին մէջ ալ սուրճ:

Ապա լոռութեամբ սպասեց, մինչ երեք կաթսաները կ'եռային: Աղջիկը անհամբեր կը նայէր, զարմանալով որ ինչ պիտի ըլլայ ասոր արդիւնքը: 20 վայրկեան ետք խոհարարը մարեց կրակները եւ

ԲՈՒԱՆՍԵԹԻԱ ԾԱՂԻԿԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ


Մեքսիկայի սահմանակից գիւղաքաղաքի մը մէջ, Յիսուսի ծնընդեան նախօրեակին, տասնեակ մը մոմերու լոյսը կը պլպլար հին եկեղեցիի մը միակ պատուհանէն: Տարիներէ ի վեր, այս գիւղին մէջ սովորութիւն դարձած էր, որ ընտանիքներ խթան գիշերը իրենց ընծաները բերէին Յիսուս մանուկին: Ընտանիքին ամենատարեցէն մինչեւ ամենափոքր անդամները երկիւղածութեամբ կը մօտենային մսուրի տեսարանին եւ երկրպագելով իրենց նուէրը կը գետեղէին խորանին առջեւ: Գիշեր մը պըզտիկ որբ տղայ մը առանձին կեցած էր եկեղեցւոյ դրան առջեւ: Ան շատ կը փափաքէր միւս ընտանիքներուն միանալ, սակայն այդքան աղքատ էր, որ բան մը չունէր Յիսուս մանուկին ընծայելու: Մինչ ան պատուհանին մօտ կեցած էր, եկեղեցւոյ երգեհոնին ձայնը լսեց, գեղեցիկ եղանակը հմայեց անոր հոգին, ան ծնրադրեց եւ գլուխը յակելով աղօթեց: Երբ նուագը վերջացաւ, ան դարձեալ ոտքի կեցաւ եւ ուզեց որբանոց վերադառնալ: Սակայն զարմացաւ երբ տեսաւ, որ այդտեղ ուր ինք ծնրադրած էր աղօթելու, մութ կարմիր տերեւներով եւ կեդրոնը պզտիկ դեղին գունդերով բոյս մը ծաղկած էր: Որբուկը այս ծաղիկին նման գեղեցիկ ու օտար ծաղիկ չէր տեսած երբեք: «*Գրեշտակները ինծի նուէր մը տրամադրեցին, որ ես ալ Յիսուս մանուկին նուիրեմ*», մտածեց ան եւ կամացուկ մը ծաղիկը վերցուց ու եկեղեցի մըտնելով զայն մսուրին մօտ գետեղեց ակնածանքով: Անկէ վերջ ամէն տարի Ծնունդի շրջանին այս յատուկ ծաղիկը սկսաւ բուսնիլ եւ այդ գիւղի ժողովուրդը զայն կոչեց «Սուրբ գիշերուան ծաղիկ»:

Բուանսեթիա մականունով ազնիւ ընտանիք մը որդեգրեց այս տղեկը, որ մեծնալով յաջող վաճառական մը եղաւ: Տարիներ վերջ ան վերադարձաւ իր շատ սիրելի գիւղաքաղաքը եւ հոն նոր եկեղեցի ու դպրոց կառուցեց:

Գիւղաքաղաքին բնակիչները, որպէս երախտագիտութիւն մութ կարմիր տերեւներով, կեդրոնը դեղին գունդով ծաղիկ նուիրեցին եւ այդ գեղեցիկ բոյսը կոչեցին իր իսկ մականունով՝ Բուանսեթիա:




Այս սիրուն իրեշտակը ներկէ՛ հետեւեալ գոյնե-
րով:
1.- Բաց մոխրագոյն 2.- Բաց կապոյտ
3.- Դեղին 4.- Մութ կապոյտ 5.- Վարդագոյն



Տե՛ս նապաստակ գծելը
որքան դիւրին է: Նախ գծե՛
ապա ներկէ՛:

Փորձե՛ գտնել ելքի ճամ-
բան:



ԾՆՈՒՆԴԻ ՆՈՒԵՐԸ

Տարիներ առաջ, երբ տակաւին մանուկ էի, կ'ապրէիս Վրաստանի մէջ: Ծատ կը սիրէիք մեր ապրած քաղաքը, նաեւ ժողովուրդը, սակայն հօրս ամսավճարը շատ քիչ էր մեր ընտանիքին բոլոր պէտքերը հոգալու: Դորեղբայրս ամէն տարի Դեկտեմբերին մեծ գումար մը կը դրկէր, հետեւաբար ամբողջ տարուան ընթացքին անհամբեր կը սպասէիք այդ մեծ գումարը:

Ծատ լաւ կը յիշեմ, թէ ինչպէս Ծնունդը դիմաւորեցիք, երբ տակաւին եօթը տարեկան էի: Ինչպէս ամէն տարի, այդ տարի եւս հասաւ հօրեղբօրս նամակը եւ մենք հաւաքուեցանք հօրս աթոռին շուրջ, մինչ ան կը բանար պահարանը: Սակայն այս անգամ ամէն բան տարբեր էր, հայրս շատ անելի ազդուած փոխանցեց մեզի նամակին պարունակութիւնը: Դորեղբայրս կը գրէր.

«Սիրելի՛ Գեորգ, ինծի քիչ մը տարօրինակ կը թուի այս տարի ձեզի պարգապէս դրամ դրկել Ծնունդին, ինչպէս ամէն տարի, հետեւաբար այս անգամ նուէրներ կը դրկեմ, յուսամ գոհ կը մնաք դրկածներէս:»

*Սիրով՝
Ռուբէն»*

Հայրս փորձեց իր յուսախաբութիւնը չարտայայտել, իսկ մայրս՝ հագի կրցաւ արցունքները զսպել:

Դորեղբօրս դրկած նուէրներու տուփը հասաւ, զոր փակ պահեցիք եւ յաջորդող քանի մը օրերու ընթացքին բաւական խօսեցանք, թէ ինչ կրնար ըլլալ մեզմէ իւրաքանչիւրին նուէրը: Ծնունդի օրը բացիք տուփը, մեծ յոյսերով եւ ակնկալութիւններով:

Ի գուր էին մեր բոլոր յոյսերը եւ ակնկալութիւնները, երբ իւրաքանչիւրս ստացաւ իր նուէրը: Իմ նուէրս պուպրիկ էր, մեծ եղբօրս նուէրը՝ փոքրիկ աստղադիտակ մը, հօրս նուէրը գեղեցիկ վե-

րարկու մըն էր, իսկ ամէնէն զարմանալին՝ մօրս նուէրն էր: Ան կը փափաքէր ունենալ կարի նոր մեքենայ մը՝ հինին փոխարէն, զոր պէտք էր իր ոտքերով աշխատցնել: Սակայն իր նուէրը մեծ, փայլուն կաշիէ պայուսակ մըն էր: Նոյնիսկ ես շատ տարօրինակ նկատեցի այդ նուէրը, երբ ջանացի երեւակայել մայրս այդպիսի պայուսակով մը:

Վերջին նուէրի ծրարն ալ բանալէ ետք, նստեցանք մեր տեղերը եւ զետեղեցիք նուէրները՝ իրենց

փայլուն թուղթերով մեր շուրջը: Չարմացած եւ յուսահատած՝ անկարող էինք բան մը ըսելու վերջապէս հայրս ոտքի ելաւ եւ ըսաւ.

- Սիրելիներս, վստահ եմ, որ կը կարծեք թէ եղբայրս չկրցաւ հասկնալ մեր պէտքերը եւ փափաքները եւ մեզ յուսախաբ ըրաւ, բայց կը կարծեմ, որ մենք չկրցանք հասկնալ զինք: Ինչպէս գիտեք, եղբայրս կին եւ զաւակներ չունի, վստահ եմ որ ան շատ յաճախ առանձին կը զգայ եւ ասով հանդերձ ան մեզի համար շուկայ գացած է եւ ջանացած է երեւակայել թէ մեզմէ իւրաքանչիւրը ինչ բանի կրնայ պէտք ունենալ, ան մեծ սիրով ընտրած է նուէրները ու դրկած մեզի: Եթէ նուէրներուն նայինք նոր մօտեցումով, մէկ կողմ ձգելով մեր սովորական հետաքրքրութիւնները, կրնանք նկատել թէ անոնք մեր դիմաց նոր դուռ կը բանան:

Մեզմէ իւրաքանչիւրը մէկիկ-մէկիկ ըսաւ թէ ինչպէս իր նուէրը կրնայ դրական փոփոխութիւն մտցնել իր կեանքին մէջ: Բոլորս սկսանք նոր տպաւորութիւն մը կազմել նուէրներուն եւ զանոնք նուիրողին մասին, եւ սերը մտաւ մեր սենեակէն ներս որպէս շօշափելի ներկայութիւն: Մայրս սկսաւ քննել իր կաշիէ պայուսակը եւ բացատրել անոր օգուտները: Պայուսակը շատ գրպաններ ուներ, եւ նոյնիսկ գաղտնի տեղ մը՝ կարելոր բան մը պահելու: Մայրս երբ ձեռքը երկարեց եւ փորձեց մատերով շօշափել, տեսնելու անոր մեծութիւնը, փոքրիկ ծրար մը նկատեց: Այդ ծրարին մէջ հօրեղբայրս դրած էր այն գումարը, որուն կարիքը կը զգայիք մենք:



ՊՁՏԻԿ ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌԸ




Լաթաքիոյ Ազգ. Սրբոց Նահատակաց Վարժարանի Աշակերտները Կը Գծեն

Փաթիլ Ճապպուր



Մարինա Ֆարահ



Կասիա Ներսէսեան



Սեդրակ Նաճարեան